

**ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ**, ք.գ.թ.  
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան  
գրականության ինստիտուտ

## **ՔԱԶՆԱԶԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

***Բանալի բառեր** - ստեղծագործական սխրագործություն, առասպելական հերոս, հասարակական աղետ, ազգային դժբախտություն, տգետ, ստախոս, պատրանքներ, քաջնազարականություն, հիմարություն, ժողովուրդ*

### **Նախաբան**

Հովհ. Թումանյանը և Ավ. Իսահակյանը, ապրելով և ստեղծագործելով մեր երկրի համար չափազանց բախտորոշ ժամանակահատվածում, պեղելով հարազատ ժողովրդի հոգեկան աշխարհի գաղտնարանները՝ երբևիցե ողբասաց չդարձան, սիրերգությանն ու մայրերգությանը զուգահեռ ռազմակոչ հնչեցրին, ընդվզեցին աշխարհում տիրող անարդարությունների դեմ ու մարդու մեջ մարդկային գնահատեցին ու արժևորեցին:

Մարդկային հիմարությանը նրանք հեգնանք հեքիաթով են պատասխանում, բացահայտում այդ հիմարության վրա աննկատ բարձրացող թագավորությանը սպառնացող դժբախտությունը և ցավով արձանագրում, որ մարդիկ կամովի թմբիրի մեջ են հայտնվել, որևէ մեկը չի փորձում տեսածն ու զգացածը բարձրաձայնել, ընդհակառակը, լսածն ու հավատ չներշնչող լուրերը կայծակնային արագությամբ տարածում են և նպաստում կիսագրագետ ու ապաշնորհի Նազարի հանրաճանաչ դառնալուն:

Անձնապաշտությունը մարդուն մղում է դեպի ապամարդկայնացում, իսկ բարոյական արժեքների կորուստը սպառնալիք է հասարակության համար, երբ եսակենտրոնությունը հասնում է գագաթնակետին, ահազանգում են բանաստեղծները, որոնց մշակած հեքիաթներն ասօր էլ, գրեթե 110 տարի անց, իրենց արդիականությունը պահպանում են, քանզի քաջնազարակությունը դեռևս շարունակում է իր հաղթարշավը, իսկ մարդիկ իրենց շուրջը կատարվող դեպքերին ու ի-

րադարձություններին զարմանալի անտարբերությամբ են նայում:

Ապրելով և ստեղծագործելով հայոց պատմության վերելքներով ու վայրէջքներով, պատրանքներով ու խորտակումներով լեցուն ժամանակահատվածում, լինելով այդ ամենի ակա՛նատեսն ու անմիջական մասնակիցը, թե Իսահակյանը, թե Թումանյանը գիտակցաբար իրենց կյանքը դրեցին հայրենիքի զոհասեղանին՝ իրենց ապրած կյանքը դարձնելով ստեղծագործական ու քաղաքացիական սխրագործություն: Անբան ու վախկոտ, մեծամիտ և ստախոս, պարծենկոտ ու դատարկագլուխ հերոսի մասին պատմող հեքիաթային սյուժեին քաջածանոթ բանաստեղծները չէին կարող զեղարվեստական մշակման ենթարկած սեփական և ինքնատիպ մշակումները չներկայացնել հանրության դատին: Լ. Հախվերդյանը գնահատմամբ. «Իր ստեղծագործության ոչ մի էջում Թումանյանը բարոյախոս չէր, բայց և նրա ամեն մի էջն ունի իր բարոյական խորհուրդը, իր խրատը: Խրատ՝ առանց խրատաբանության, նպատակ՝ առանց նպատակայնության»<sup>1</sup>:

Թումանյանը /«Քաջ Նազար»/ և Իսահակյանը /«Աղա Նազար»/ մեղմ, բայց խորիմաստ հեգևանքով են խոսում կարճամիտ, ապաշնորհ, տգիտությամբ աչքի ընկնող ու անխելք Նազարի մասին՝ հիմարությունը հեգևանքով քննարկման գլխավոր առարկա դարձնելով: Աշխարհից անտեղյակ Նազարը պատեհ ամիթը բաց չի թողնում երևակայության սանձերը բաց թողնելու, որովհետև կատակի գինը չիմացող սնապարծ է, ոչ թե խաբեբա է, այլ ալարկոտ ու անխելք մարդ, որը ոչ իր կամքով, այլ աստծո պարզև բախտի շնորհիվ արքայական գահին է բազմում ու աշխարհին նայում որպես իր ոտքերի տակի հնամաշ գորգի՝ ինչ-որ տեղ նմանվելով բակունցյան հանրահայտ բզեզին: Թումանյանը հասկանալիորեն ակնարկում է, որ անխելքությունը և դատարկագլխությունը չարիք են, ինչը հասարակական աղետի ու ազգային դժբախտության պատճառ կարող է դառնալ, եթե ժամանակին չկանխվի: Նրա մտահոգությունը հիմնազուրկ չէ. Նազարի հիմարությունն ու պարծենկոտությունը ոչ միայն վարակիչ են, այլև վարակի պես աղետալի, որովհետև, երբ, նրա օրինակին հետևելով, բանականությունից զրկվում են շա-

<sup>1</sup> Հախվերդյան Լ., «Թումանյանի աշխարհը», «Հայաստան» հրատ., Երևան-1966, էջ 40:

տերն ու կույր գործիք դառնում, աննկատելիորեն գլուխ է բարձրացնում հիմարության համաճարակը, իսկ համաժողովրդական հիմարությունը համազգային ողբերգության սկիզբն է ազդարարում և նորանոր աղետների համար կանաչ ճանապարհ է հարթում:

«Քարվան կտրելու» հերթական գառացանքը լսելուց հետո կինը տանից վռնդում է «վախկոտ» մականունը ստացած արկածախնդրին, ինչը նրա ճակատագիրը կտրուկ փոխում է: Իսահակյանի մոտ կիսագրագետ Նազարն ինքն է իրեն անհաղթ հերոս հռչակում՝ լաթի կտորի վրա գրելով հայտնի տողերը, իսկ Թումանյանի մոտ գյուղի քահանան, ծաղրելու նպատակով, փալասի կտորի վրա գրում է նրա խնդրանքը: Այսպես է սկսվում երկու հեքիաթների նույնանուն հերոսների հաղթարշավը: Ապագա թագավորը այն կապում է փայտի ծայրին, ժանգոտ թրի կտորն ամրացնում է մեջքին, հեծնում ավանակն ու ճանապարհ ընկնում: Արկածներով լեցուն ճամփորդության մեղավորը ոչ թե մեծամիտ հերոսն է, այլ հիմարության գերի դարձած խառնամբօխը /մի դեպքում ուղտատերերը, իսկ մյուս դեպքում՝ հարսանիքավորները, այնուհետև՝ ավազակները/: Նազարի դրոշակի գրությունը ցնցող ազդեցություն է թողնում, ամենուր սկսում են խոսել «Անհաղթ հերոս քաջ Նազարի «հերոսության ու սիրանքների» մասին: Մոլախոտը պարարտ հողում չափազանց արագ է արմատներ նետում և տարածվում, իսկ երբ հիմարությունն ու երկյուղը միախառնվում են, պարծենկոտն ու ստախոսը հաղթանակի դափնուն տիրանալու համար ոչնչի առաջ չի կանգնում: Հիմարության խրախճանքն իր գագաթնակետին է հասնում, երբ բանականությունից զրկված մարդիկ, միմյանց հերթ չտալով, սկսում են մեծարել ու գովեստի խոսքեր շռայլել ու հավատալ իրենց իսկ ասած սին խոսքերին: Ծույլ ու անբան, վախկոտ և ստախոս Նազարին թումանյանական գրիչը պաշտամունքի առարկա է դարձնում, այնուհետև վերածում հիմարության մարմնացման, երբ հարսանիքին ներկա աշուղը քծնական ներբող է ծնում նրան ու խրոխտ ձայնով երգում. «Հզոր արծիվ մեր սարերի, // Թագ ու պարծանք մեր աշխարհի»: «Խեղճերի պաշտպան ու ապավեն» նորահայտ փրկչի մասին լուրը ձևագնդի արագությամբ լեռան գագաթից ներքև է գահավիժում: Մարդկային հիմարությունը սահմաններ չունի, այն անեզր ծովի ու անհատակ

օվկիանոսի է նման: Չավեշտային այն է, որ ժողովուրդը չի գիտակցում, որ նման քայլով ինքն իրեն է ծաղրում ու ծաղրի առարակա դառնում, իսկ սթափ ձայն բացարձակապես չի հնչում, որովհետև հիմարության խրախճանքի պահին սթափության կոչ անողը քամահրանքի է արժանանում միայն:

Թե՛ Թումանյանի և թե՛ Իսահակյանի անթաքույց հեգնաքննում ու ծաղրն ուղղված են ոչ թե դատարկագլուխ ու կիսագրագետ Նազարին, այլ նրան Նորոյա հերոս հռչակած ու իր իսկ ձեռքով կերտած, Նախապաշարմունքի զոհ դարձած ժողովրդին, որը սկուտեղի վրա հաղթանակի դափնին առանց գիտակցելու մատուցում է մեկին, որը կյանքում ոչինչ չէր արել, մի քանի ճանճ սատկացնելուց բացի: Այսպես վախկոտ, ծուլ ու անբան, խորամանկ ու մեծամիտ ստախոսը բանաստեղծների դիպուկ վրձնահարվածներով բարեհաջող պատահականությամբ ու իր կամքից անկախ ականա դառնում է արքայական բարձունքները սլացող առասպելական հերոս: Միանգամայն հիմնավոր է Ա. Վարդանյանի այն դիտարկումը, որ «Նազարի կերպարը մշակելիս Թումանյանը ձգտել է նրան պատկերել բացարձակապես որպես վախկոտ ու անճարակ մեկի, որը հեռու է խորամանկությունից, ճարպկությունից ու հնարագիտությունից, հատկանիշներ, որոնք տրված են բանիմաց ու գործույնյա մարդուն»<sup>2</sup>: Միևնույն ժամանակում հերոսի հոգեկան ներաշխարհի սեփական մեկնաբանմամբ, այնուհետև գեղջուկ Նազարի և թագավորական գահին բազմածի դատողությունների հակասականությամբ բացահայտում է կյանքի աստիճաններով անարգել վեր բարձրացող խեղկատակի հոգեբանությունը, որը հավասարապես վերաբերվում է բոլոր ժամանակների բախտախնդիրներին:

Խոսելով այս ստեղծագործությունների մասին, Ս. Աղաբաբյանը նկատում է. «Հովհ. Թումանյանը իր մշակած «միակ կարգին հեքիաթում» ստեղծեց Քաջ Նազարի մոնոմենտալփիլիսոփայական-սինթետիկ տարբերակը, Ավ. Իսահակյանը՝ «կենցաղային-առօրեական-շարքայինը»՝ մի գյուղի սահմաններում: Հովհ. Թումանյանի Քաջ Նազարը «աշխարհքի վրա ծիծաղում է» «ականա»՝ կույր պաշտամունքի թելադրությամբ, Ավ. Իսահակյանի աղա Նազարն իր գործն առաջ է տանում Նախախնամության «կամքով»<sup>3</sup>:

<sup>2</sup> Վարդանյան Ա., «Հովհաննես Թումանյանի հեքիաթները», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 143:

<sup>3</sup> Աղաբաբյան Ս. «XX դարի հայ գրականության զուգահեռներում», գիրք 1, «Սովետական գրող», հրատ., Երևան, 1983 Չ., էջ 133:

Չնայած վախն անտես ուրվականի պես մշտապես ուղեկցում էր Նազարին, և թվում է, թե այն պետք է նրա համար գուպաշապիկի դեր կատարի, սակայն հենց այդ նույն վախի շնորհիվ է նա «պատմություն կերտող» դառնում: Վախը նրան քարավանատեր ու ձիատեր է դարձնում, հսկաներին տեսնելիս վախից գունատվում ու դողացնում է, իսկ հսկաները կարծում են, թե զայրացել է: Ավազակները հպատակվում են նրան, երբ վախից ընկնում է վագրի վրա ու կպչում նրան, արագորեն լուր է տարածվում, թե վագրին ձի է շինել ու հեծնել, վախն է նրան ստիպում հարևան երկրի թագավորի սպանել, իսկ մյուս դեպքում, երբ պատերազմի դաշտում ձեռքը գցում է մի ծառի, որ դրանից կառչի, փտած ծառն արմատախիլ է լինում, իսկ ավազակների քրոջ համար պատերազմ հայտարարած թագավորին այլ բան չէր մնում անել, քան փախչել ու գլուխը պրծացնել:

Փառասիրությունը Նազարի մշտական ուղեկիցն է, նա երբեք չի թաքցնում իր եռությունը, որը կործանման պատճառ կարող էր դառնալ: Նա ինչ-որ պահ պարզունակ դատողություններ է անում, սակայն ջինն արդեն շշից բաց էր թողնվել, և ոչ ոք ոչ միայն ճշմարտությունը լսելու ցանկություն չունեի, այլև ի գորու չէր այն լիովին ընկալել: Նազարը հասել էր իր բաղձալի նպատակին, համաժողովրդական հիմարացումը նրան նորանոր փառք ու պսակ էր բերում՝ հասցնելով արքայական գահին, որի մասին նա ոչ միայն երբևէ չէր երագել, այլև նույնիսկ պատկերացում չունեի: Եթե Թումանյանն իր հերոսին մեղմ ծաղրով է ներկայացնում, իսկ հարվածի սլաքն ուղղում է նրան պաշտամունքի առարկա դարձնող մարդկանց դեմ, ապա Իսահակյանը մեղմ, բայց խայթող հումորով է ներկայացնում: Գահին բազմելուց հետո նույն տգետ գեղջուկը մնացածին, ով խնջույքի ժամանակ թագուհու «մարմարյա այտը... անուշ պաչ էր անում ու խմում քառասուն տարվա գինին», ապա կոպտորեն բոթում է հարևանությամբ նստած կնոջ կողքն ու հերթական անգամ պարծենում, թե ինչպես թագավոր դարձավ: «Ծիծաղում էր կնիկը ու կարմիր թուշը դեմ անում Աղա Նազարին. բախտավոր Աղա Նազարն էլ գգիրի իրեն հին սովորության պես կծում էր կնկա թուշը ու խմում քառասուն տարվա գինին»<sup>4</sup>: Նազարի վերաբերմունքը սոցիալական տարբեր ծագում ունեցող կանանց հանդեպ խոսում

<sup>4</sup> Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, Հ 5, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994 թ., էջ 246:

Ե նրա վարքագծի ու մտածելակերպի փոփոխության մասին: «Խելքն ու կտրիճությունը» նշանաբան ընտրած վախկոտը, իր անսպասելի հաջողությունից կուրացած, առաջինին դիմում է «թագուհի», իսկ երկրորդին՝ «կնիկ»: Թշնամու թագավորին հաղթած ու հսկաների ամրոց վերադարձած թումանյական հերոսին ժողովուրդը այնպիսի փառք ու պատվով է դիմավորում ու մեծարում, ինչը «աշխարհն իր բռան մեջ» տեսնող Նազարը զարմանքը թաքցնել չի կարողանում, իսկ երբ «քաջությունից, խելքից ու հանճարից մտը խոսք են գցում, ծիծաղում է, ասում է.

-Ի՛նչ քաջություն, ի՛նչ խելք, ի՛նչ հանճար, դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունես՝ քե՛ֆ արա...»<sup>5</sup>:

Հաղթանակ, փառք, արքայական գահ, ահա այն ուղին, որն անցավ ճանճասպան ու տնից վռնդված արկածասերը, իսկ հանգամանքների նպաստավոր դասավորության շնորհիվ թագավորին վայել կյանք է անում, քեֆերից աչք չի բացում և ծիծաղում այն նույն աշխարհի ու մարդկանց վրա, որոնք կամովին հայտնվեցին թմբիրում, ոչ միայն հանդուրժեցին նրա գոյությունը, այլև առասպելական հերոս հռչակեցին, դափնեպսակ դրեցին դատարկագլխի գլխին ու սկսեցին աստվածացնել ու երկրպագել: Նազարն իր հաջողությունը վերագրում է ոչ թե ժողովրդին, որին երախտիքի խոսք անգամ չի ասում, այլ բախտին, որը ճակատագրական պահերին նրանից երբեք երես չթեքեց: Նա միանգամայն իրավացի է, իրոք, իրավունք ունի արհամարհել խառնամբօս հիշեցնող այն նույն բազմությանը, որը թացը չորից գատել չկարողացավ, հիմարության ախտով վարակվեց ու տգետին իրեն թագավոր կարգեց:

Մարդն ինքն է իր կյանքի տիրակալը, իսկ կյանքն այն է, ինչպիսին նրան դարձնում են: Նազարները կշարունակեն գահակալել ու ծիծաղել աշխարհի ու մարդկանց վրա, քանի դեռ մարդ արարածը չի ապավինել աստվածատուր բանականությանն ու չի գիտակցել, որ անսկզբունք մասսայի հետ վարվում են այնպես, ինչպես ցանկանում են:

Հոգու ազատությունը ծնվում է աշխարհի և մարդու հոգեկան դաշինքից, կյանքի անընդհատ նորացման ու թար-

<sup>5</sup> Իսահակյան Ավ, Երկերի ժողովածու, Հ 3, «Հայաստան» հրատ., Երևան, 1975 թ., էջ 281:

մացման շնորհիվ: Ահա թե ինչ են պատգամել սերունդներին Ամենայն հայոց բանաստեղծն ու Վարպետը՝ վեր հանելով աշխահի ու մարդու ներդաշնակության վրա ծիծաղող ամբարտավանի հոգեբանությունը, կարևորելով մարդու ճշմարիտ ապրելակերպի և ապրելակերպի ճշմարտության թեման:

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Եթե Թումանյանն իր հերոսին մեղմ ծաղրով է ներկայացնում, իսկ հարվածի սլաքն ուղղում է նրան պաշտամունքի առարկա դարձնող մարդկանց դեմ, ապա Իսահակյանը մեղմ, բայց խայթող հումորով է ներկայացնում Նազարին:

Ահա թե ինչ են պատգամել սերունդներին Ամենայն հայոց բանաստեղծն ու Վարպետը՝ վեր հանելով աշխահի ու մարդու ներդաշնակության վրա ծիծաղող ամբարտավանի հոգեբանությունը, կարևորելով մարդու ճշմարիտ ապրելակերպի և ապրելակերպի ճշմարտության թեման:

**Ani Ghazaryan - Preface:** Renowned Armenian poets Hovh. Tumanyan and Av. Isahakyan, living and creating in an extremely pivotal period for our country, unearthing the secrets of the spiritual world of their native people, never became mourners; in parallel with poems on love and motherhood, they called for war, rebelled against the injustices reigning in the world and appreciated and valued humanity in a human being. The multi-genre poets, who considered the inconsolable grief and pain of the homeland theirs, looked to the future with faith, hoping that the future of their homeland will be more than bright.

With the irony tale of human stupidity, they gently reveal the misfortune threatening the kingdom, which rises unnoticed on that stupidity, and record with pain that people voluntarily have fallen in a trance, that no one is trying to express what they have seen and felt, on the contrary, they spread rumors and unbelievable news at lightning speed, contributing to the popularity of the semi-literate and incompetent Nazar.

Selfishness leads a man to dehumanization, and the loss of moral values is a threat to the society when egocentrism reaches its peak, the poets alarm, whose fairy tales are still relevant today, 110 years later, since the phenomenon of brave Nazar still continues its triumph, and people look at events happening around them with surprising indifference.

**Key words:** creative feat, mythical hero, social catastrophe, national misfortune, ignorant, liar, illusions, phenomenon of brave Nazar, stupidity, people.

**Ани Казарян - Предисловие:** Великие армянские поэты Ов. Туманян и Ав. Исаакян, жившие и творившие в чрезвычайно судьбоносный для нашей страны период, раскапывая тайны духовного мира родного народа, никогда не стали скорбящими, призывали к войне параллельно с песнями посвященные любви и материнству, восстали против несправедливостей в мире и ценили человеческое в людях. Многожанровые поэты, считавшие неутешимое горе и боль Родины своими, с верой смотрели в завтрашний день, надеясь, что будущее Родины будет более чем светлым.

Со сказкой иронией человеческой глупости они деликатно раскрывают несчастье, угрожающее королевству, которое незаметно поднимается над этой глупостью, и с болью устанавливают, что люди добровольно впали в транс, никто не пытается озвучить то, что видел и чувствовал, наоборот, молниеносно распространяют слухи и невероятные новости, способствуя популярности полуграмотного и бездарного Назара.

Эгоизм ведет человека к дегуманизации, а потеря моральных ценностей - угроза обществу, когда эгоцентризм достигает пика, поднимают тревогу поэты, чьи сказки актуальны и сегодня, спустя 110 лет, поскольку феномен храброго Назара все еще продолжает свое торжество, а люди смотрят на события и происходящее вокруг них с удивительным равнодушием.

**Ключевые слова:** творческий подвиг, мифический герой, социальная катастрофа, национальное несчастье, невежественный, лжец, иллюзии, феномен храброго Назара, глупость, народ.

## REFERENCES

1. Axababyan S. "XX dari hay grakanutyun", girq 1, "Sovetakan grox", hrat., Yerevan, 1983 2., 428 eg.
2. Isahakyan Av., Yerkeri goxovacu, H 3, "Hayastan" hrat., Yerevan, 1975 t., 480 eg.
3. Tumanyan Hovt., Yerkeri liakatar goxovacu, H 5, HH GAA "Gitu4. tyun" hrat., Yerevan, 1994 t., 530 eg.
4. Haxverdyan L., "Tumanyani ashxarh@", "Hayastan" hrat., Yerevan, 1996 t., 500 eg.
5. Vardanyan A., "Hovhannes Tumanyani heqiatner@", HSSH GA hrat, Yerevan, 1986 t., 216 eg.